


# Կռամատ աղջիկը



Exported from Wikisource on 08/04/20

# Կոնաստ աղջիկը

← [Տերն  
ու ծառան](#)

[Պոշատ  
աղյլես](#) →

[Հովհաննես  
Թումանյան](#)

## [202] ԿՈՆԱՏ ԱՂՋԻԿԸ

Ժամանակով լինում են, չեն լինում՝  
մի քոյր ու մի ախաբեր են լինում։ Քոյրը  
էնքան սիրուն, էնքան շարմադ է լինում,  
ինչպես լուսի կտոր, անունն էլ Լուսիկ։

Ախաբերը պսակվում է, կնիկ է  
քերում։

Ախաբերը ամեն կերպ աշխատում է  
ուրախ պահի քրոջը։ Մին տուն է զալիս՝  
հետք ծաղիկ է քերում նրա համար, մյուս  
օրը՝ միրգ, մի ուրիշ անգամ՝ հազուստ։

Եվ Լուսիկը մնում է միշտ քարի,  
գեղեցիկ ու սիրված ամենքից։

Հարսը նախանձից քիչ է մնում  
տրաքի, մտածում է՝ ինչ անի, ոնց անի,  
որ մեջտեղից կորցնի Լուսիկին։

Մտածում է, մտածում է, մի օր էլ,  
երբ մարդը տանից դուրս է գնում, վեր է  
կենում, տան կահ-կարասին, աման-  
շամանը իրար գլխով է տալի, շարդում  
ու գնում ձեռները ծոցին դուանը  
կանգնում մինչև մարդու գալը։

Որ տեսնում է՝ մարդը գալիս է,  
սկսում է լաց լինել:

- ԱՇ, — ասում է,- Էս Էլ քու սիրած  
քույրը, տանը ինչ ունեինք-չունեինք՝  
շարդեց:

- Բան չկա, ա՛յ կնիկ, դրա համար  
ինչո՞ւ ես լաց լինում, եղ բոլորն առնելու  
բաներ են: Աման է՝ կոտրեց, նորը  
կառնենք, բայց Լուսիկի սիրտը որ  
կոտրենք, հետո ի՞նչ անենք:

Կինը տեսնում է, որ Էս մինը չեղավ:  
Մյուս անգամ, երբ մարդը դուրս է գնում,  
նրա սիրած ձին տանում է, քշում,  
կորցնում ու գալիս ձեռները ծոցին՝  
կտերը կանգնում, մինչև մարդը ետ է  
գալի:

- ԱՇ,- ասում է,- Էս Էլ քու սիրած  
<sup>203</sup> քոյրի, քու էն լավ ձին դուրս է արել,  
կորցրել, մեզ էսպես տնաքանդ է արել:

Մարդը ասում է .

- Բան չկա. ձի է, կորել է,  
կաշխատեմ, մի ուրիշ ձի Էլ կառնեմ,  
բայց հո չեմ կարող մի ուրիշ քույր առնել:

Չար կինը տեսնում է, որ Էս անգամ  
Էլ զուր անց կացավ, ավելի է  
կատաղում, իրեն ուսում:

Մի գիշեր Էլ, քնած ժամանակը, իր  
երեխին օրորոցումը մորթում է, արնոտ  
դանակը թաքուն գնում քնած Լուսիկի  
գրապանը:

Գիշերվա մի ժամանակը մազերը  
շաղ է տալի, երեսը պոկում, ճշում,  
ծղրտում .

- Վա՛յ, երեխես, երեխես . . .

Տանըցիք վեր են թռչում, տեսնում՝ երեխեն օրորոցումը մորթած: Մնում են սարսափած, սասանած կանգնած: Էս ո՞վ կլինի, ո՞վ չի լինիլ . . .

Հարսն ասում է .

- Ել ո՞վ պետք է լինի, էս տունը մեզանից բացի հո էլ ուրիշ մարդ չի մտել, ման գանք, ում գրպանում արնոտ դանակը գտնենք, նա կլինի:

Համաձայնում են: Ման են գալի, ու . . . արնոտ դանակը հանում են Լուսիկի գրպանից:

Մնում են քար կտրած, բայց էլ ի՞նչ . . .

- Ե՞ս էլ քու սիրած քույրը,- ճշում է չար կինը ու երեսը պոկում. «Երեխե՞ս . . . երեխե՞ս . . .»:

Առավոտը լուսի հետ՝ աշխարհով մին լուրը տարածվում է: Ժողովուրդը վրդովվում է, դատաստան է պահանջում, մայրը լալիս է, դատաստան է պահանջում, ու գեղեցիկ Լուսիկին քաշում են դատաստանի դուռը: Դատում են, վճռում, կոները կտրում են ու էնպես, կոնատ, տանում, հեռացնում, կորցնում են հեռո՛ւ, հեռո՛ւ անտառներում:

Էսպես կոնատ, մեն-մենակ թափառում է Լուսիկը անբնակ անտառներում: Շատ թափառելուց թիերն ու փշերը հազի շորերը տանում են, մնում է տկլոր: Մոժակներն ու մժեղները կծոտում են, ձեռ չի ունենում

թէ<sup>[204]</sup> քշի, մտնում է մի ծառի փշակ: Օրերից մի օրը թագավորի տղեն էս անտառը որսի է զալի: Որսի շները անտառում էս ու էն կողմն են ընկնում, մի ծառի շրջապատում ու սկսում են հաշել:

Թագավորի տղեն, իր հետի մարդիկը մտածում են, թե շները երևի գազանի հետքի վրա են ընկել կամ որչ են գտել, ու սկսում են շներին հիս անել:

- Հիս մի՛ անիլ ինձ վրա, թագավորի որդի,- ձեն է տալի աղջիկը ծառի փշակից,- ես մարդ եմ, գազան չեմ:

- Թե մարդ ես, դե դուրս արի:

- Չեմ կարող, մերկ եմ, ամաչում եմ:

Թագավորի տղեն ձիուց իշնում է, վերարկուն հանում տալի իր մարդկանց, որ տանեն զցեն աղջկա վրա: Վերարկուն տանում են, զցում են աղջկա վրա. դուրս է զալի մի սիրուն, մի աննման աղջիկ, որ ոչ ուտես, ոչ խմես, կանգնես ու մտիկ անես: Թագավորի տղեն հայիլ-մայիլ է մնում:

- Ո՞վ ես դու, սիրուն աղջիկ, ի՞նչ ես շինում էս անտառում, ի՞նչու ես մտել էս ծառի փշակը . . .

- Ես մի էսպես աղջիկ եմ. աշխարհումը մի ախապեր ունեմ, բայց ախապերն էլ է ինձ թողել, աշխարհըն էլ . . .

- Ախապերդ էլ է քեզ թողել, աշխարհըն էլ, բայց ես չեմ թողնիլ, - ասում է արքայորդին ու առնում է Լուսիկին, տանում իրենց տունը:

Տանում է իրենց տունը, հորն ու մորը հայտնում, թե պետք է պսակվի նրա հետ:

- Թե սրա հետ կպակվեմ՝ լավ, թե չէ ինձ մի փորձանքի կտամ:

Հերն ու մերն ասում են .

- Այ որդի, աշխարհի աղջկները ին վերջացել չեն . թագավորների աղջկներ կան, նազիր-վեզիրների աղջկներ կան, հարուստ, գեղեցիկ . . . Եղ կռնատ, տկլոր, անտեր աղջկն ո՞վ է, որ դու դրան ուզում ես:

- Չե՛, որ չէ . . .

Հերն ու մերը ճարահատված իրենց քաղաքի խելոք մարդկանց հավաքում են, մի խորհուրդ են հարցնում, թե ինչպես անեն, իրենց որդուն եղ կռնատ ան<sup>205</sup> կա հետ պսակեն, թե չէ: Խելոք մարդիկ ասում են .

- Մարդ ու կնկա բախտը որ կա՝ սրտիցն է: Զեր տղի բախտն էլ, երևի, եղ աղջկն է, որ սիրտը կպել է դրան: Աստված դրանց համար էլ եղպես է բարի տեսել:

Ես որ լսում են, հերն ու մերն ել համաձայնում են, յոթն օր, յոթը գիշեր հարսանիք են անում, ու թագավորի տղեն ամուսնանում է գեղեցիկ Լուսիկի հետ:

Միառժամանակ անց է կենում, ես թագավորի տղեն գնում է հեռու երկիր: Գնալիս տանը պատվիրում է, որ երբ կինը ծնի, իրեն տեղեկություն գրեն: Պատվիրում է ու գնում:

Սրա գնալուց մի քանի ամիս անց է կենում, Լուսիկը ազատվում է, մի սիրուն, շարմաղ, ուկեզանգուր տղա է ծնում:

Թագավորն ու թագուհին ենպես ուրախանում են, ենպես ուրախանում են, որ աշխարհովով մին են լինում: Աչքալուս են գրում, նամակը տալիս են սուրհանդակին, ուղարկում են: Դու մի ասիլ, ես նամակ տանողը գնում է, ճանապարհին հյուր է ընկնում Լուսիկի եղբոր տանը ու գիշերը մնում է նրանց մոտ: Իրիկունք գրույց անելիս պատմում է, թե՛ հապա՛, Էսպես-Էսպես մի քան է պատահել, ու հիմի աչքալուսի թուղթ եմ տանում թագավորի տղին:

Չար հարսը Էստեղ գլխի է ընկնում բանը: Գիշերվա մի ժամանակը վեր է կենում, ես մարդի գրպանից նամակը հանում, կրակը զցում ու ինքը մի նոր նամակ գրում, դնում տեղը: Գրում է, թե՛ հապա չես ասիլ, քու գնալուց ետք կինդ ծնեց, մի շան լակոտ քերա՛վ. . . Էսպես խայտառակվեցինք աշխարհի մեջ. հիմի քեզ իմացնում ենք. զրի, ինչ անենք, ինչ շամենք:

Սուրհանդակը ես նամակը տանում է տալի թագավորի տղին: Կարդում է թագավորի տղեն ու շա՛տ-շա՛տ վշտանում: Հորն ու մորը նամակ է գրում, թե՛ իմ բախտն էլ երևի էղ է եղել, ինչ որ աստված տվել է, իմն է, պահեցեք, կնկան էլ մի թքու խոսք շասեք, մինչև ես գամ:

Գրում է, նամակը տալի սուրհանդակին, ես որկում: Ես սուրհանդակը վերադարձին գալիս է

կրկին իր հյուրատունը ու Էլի գիշերը  
մէ<sup>206</sup> է նրանց մոտ: Չար հարսը  
գիշերվա մի ժամանակն Էլի վեր է  
կենում, սրա գրպանից թագավորի տղի  
նամակը հանում, զցում կրակը, ինքը մի  
նորը գրում, դնում տեղը: Գրում է, թե՛ իս  
կինն ինչ որ ծնել է, իր ծնած շան  
լակոտը դոշիցը կկապեք ու դուրս  
կանեք, կկորցնեք, որ ես չգամ ու մեր  
տանը տեսնեմ, թե չէ՛ ինձ մի փորձանքի  
կտամ:

Հերն ու մերը ես նամակը որ ստանում  
են, մնում են զարմացած: Ասում են .

- Ես ի՞նչ բան է. ինքը բերավ մեր  
կամքին հակառակ հետը պսակվեց,  
հիմի էլ գրում է, թե՛ դուրս արեք . . .

Շատ են տխրում, շատ է մեղքները  
զալի, բայց ինչ որ գրել էր՝ պետք է  
կատարեին:

Բերում են, երեխեն կապում են մոր  
դոշիցը, լաց են լինում, օրհնում են ու  
իրենց տանիցը դուրս են անում:

Երեխեն դոշիցը կապած՝ Լուսիկը  
գնում է լալով: Անց է կենում խոր ձորեր,  
մութ անտառներ, անքնակ դաշտեր,  
ընկնում է մի անջուր, ամայի անապատ:

Ես անապատում ծարավ, ջոշոր՝  
գնում է. շատ է գնում, թե քիչ է գնում,  
շատն ու քիչն ել աստված գիտի,  
հասնում է մի ջրհորի: Նայում է ջրհորի  
մեջը, աչքին թվում է, թե ջուրը մոտիկ է:  
Կուանում է թե ջուր խմի, երեխեն գրկիցը  
ընկնում է ջրհորի մեջը: Ճշալով ջրհորի  
ես կողմն է թռչում, են կողմն է թռչում:  
Հանկարծ ետևից մի ձեն է զալի.

- Մի՛ վախիլ, աղջիկ շան, մի՛ վախիլ, հա՛նի . . .

Ետ է նայում, տեսնում՝ սիպտակ սիրուքը մինչև գոտկատեղը մի ծերունի:  
Ասում է .

- Ո՞նց հանեմ, չեմ կարող, պապի շան, ձեռներ շունեմ:

- Հա՛նի, հա՛նի, աղջիկ շան, ձեռներ ունես, մեկնի . . .

Լուսիկը կոները մեկնում է, ձեռները բացվում են, ու երեխեն ջրիորից հանում է: Ետ է դառնում թե շնորհակալություն անի, տեսնում է՝ ծերունի շկա, աներևութացել է:

Սրան էստեղ թողնենք իր երեխսի հետ ու հիմի ո՞ւմնից տեղեկություն տանք: Հիմի տեղեկություն տանք թագավորի տղիցը:

Թագավորի տղեն օտարությունից վերադառնում է, ամեն բան իմանում է ու էլ տուն չի մտնում, դռնիցը ետ է դառնում, զնում է աշխարհքեաշխարհք ման գա, որ իր կնկանն ու երեխին գտնի:

Գնում է ման է գալի, էս կողմը՝ հարցուփորձ, էն կողմը՝ հարցուփորձ, մի տեղ պատահում է մի մարդու:

- Բարի օր:

- Աստծու բարին:

- Ո՞ր, առաջ բարի:

- Իմ քրոջն եմ ման գալի:

- Դե մին չլինենք, երկու լինենք,  
զնանք, ես էլ իմ կնկան ու երեխիս եմ  
ման գալի:

Ընկերանում են, գնում են ման գալի,  
մի տարի, երկու տարի, երեք տարի, ո՞չ  
տեղն են իմանում, ո՞չ տեղեկությունը:  
Վերջը գալիս էս քազավորի տղեն մի  
մեծ ճանապարհի վրա քարվանսարա Է  
պահում, ընկերն էլ իր տունուտեղը, իր  
կնկանը բերում է ու էնտեղ ապրում են,  
որ գուցե թե գնացող-եկողից մի քան  
իմանան:

Մի անգամ էս քարվանսարի դուռն Է  
գալի մի աղքատ կին իր փոքրիկ տղի  
հետ:

**Թազավորի տղեն իր ընկերոջը**  
**ասում է .**

- Եկ ներս կանչենք էս աղքատ  
կնկանն ու իր երեխին: Մրանք լավ  
հերիաքներ են զիտենում ու լավ Էլ  
պատմում են. հերիաք կպատմի, մենք  
Էլ դարդի տեր մարդիկ ենք, կլսենք,  
զիշերն անց կկենա:

Ընկերոջ կնիկն էն կողմից  
հակառակում է, թե՛ մենք հազիվ ենք  
տեղավորվում, դրանց ո՞րտեղ բերենք:

**Թազավորի տղեն որ շատ խնդրում**  
**է, ներս են քողնում մուրացկան կնկանն**  
**ու իր երեխին: Մերը պատի տակին կուշ**  
**է գալի, երեխեն Էլ կողքին: Թազավորի**  
**տղեն ասում է .**

- Քուններս չի տանում, քուրիկ,  
հերիաքից, առակից կիմանաս, պատմի  
լսենք, զիշերն անց կենա:

- Ես ո՞չ հերիաք գիտեմ, ո՞չ առակ,-  
պատասխանում է աղքատը,— Ես մի  
ճշգրիտ պատմոթյուն գիտեմ, մի  
պատահած դեպք և շատ  
հետաքրքրական, թե կուզեք, պատմեմ,  
լսեցեք:

- Լավ, Էդ պատմի:

[208] Աղքատ կինը սկսում է պատմել: -  
Մի ժամանակ մի աշխարհում լինում  
են, չեն լինում՝ մի քուր ու մի ախաղեր են  
լինում: Ախաղերը պսակվում են, կին է  
բերում, մի շար ու նախանձու կին:

Տանտիկինը էն կողմից բարկանում  
է.

- Հը՛, սկսեց զլխիցը դուրս տալ:

- Այ կնիկ, ի՞նչ ես ուզում, ինչո՞ւ ես  
խանգարում, թող պատմի,- նեղանում է  
մարդը:- Պատմի, քույրիկ, դու  
պատմի . . .

Աղքատ կնիկը շարունակում է իր  
հերիաքը .

- Քույրը մի գեղեցիկ ու բարեսիրտ  
աղջիկ է լինում, ամենքը սիրում են  
նրան: Ախաղերն ել ամեն տուն գալով  
միշտ նրա համար մի քան է բերում՝ կամ  
ծաղիկ, կամ միրզ, կամ հազուս և կամ  
թե չե՛ մի քաղցր խոսք է ասում:  
Նախանձում է շար հարսղ, հնարքներ է  
մտածում, թե ինչպես անի, որ կորցնի  
գեղեցիկ աղջկանը:

- Հը, դե տեսեք՝ ինչ է ասում Է՛ս  
անզգամը . . . - կրկին մեջ է ընկնում  
տանտիկինը:

- Այս կնիկ, ի՞նչ պատահեց քեզ . թող լսենք, տեսնենք՝ ինչ է ասում: “Դու շարունակի, քույրիկ, սրան ականջ մի դնիլ:

Աղքատը շարունակում է .

- Հնարքներ է մտածում չար հարսը: Մի օր տան կահկարասին է շարդում ու դնում անմեղ աղջկա վրա, մյուս օրը մարդու սիրած ձին է բաց թռղնում, կորցնում ու մեղադրում քրոջը, տեսնում է՝ բան չի դառնում, վերջը իր երեխին օրորոցի մեջ մորթում է, դանակը դնում քնած աղջկա գրպանը . . .

- Ձենդ կտրի, լիրք, անզգամ, ո՞վ է իմացել, որ մերն իր երեխին մորթի-, ճշում է տանտիկինը:

- Ի՞նչ ես ընդհատում,- գոռում է մարդը կնոջ վրա:- Թող պատմի, չե՞ս տեսնում՝ ինչ հետաքրքրական բան է պատմում:

Աղքատը շարունակում է .

- Դատաստան են անում, կտրում են անմեղ աղջկա կոները ու էնպես կոնատ հալածում, կորցնում հեռո՛ւ, հեռո՛ւ . . .

Հալածված թափառում է նա անտանոթ անտառներում: Են երկրի թագավորի տղեն օրերից մի օր որսի է դուրս գալի էն անտառները, գտնում է զեղեցիկ աղջկանը ու պսակվում է նրա հետ: Թագավորի տղեն հեռու երկիր է գնում: Նրա գնալուց հետո կինը ծնում է մի ոսկեգանգուր երեխա: Աշքալուսի նամակ են գրում հորը: Նամակատարը

ճամփին հյուր է ընկնում կռնատ աղջկա եղբոր տունը:

Չար հարսը զիշերը փոխում է նամակը, նոր նամակ է գրում թագավորի տղին, թե՛ քու կնիկը ծնել է, շան լակոտ է բերել . . .

- Սո՞ւ, հերիք էր ինչ որ տակից-գլխից դուրս տվիր, դուրս կորի գնա-, կատաղում է տանտիկինը:

- Ախաբեր, կնկանդ ասա հանգիստ կենա, լսենք, տեսնում ես՝ ինչ պատմություն է անում,- խնդրում է թագավորի տղեն ընկերոջը:

Աղքատը շարունակում է .

- Թագավորի տղեն կարդում է փոխած նամակը, վշտանում է, բայց Էլի գրում է, որ պահեն, մինչև ինքը կգա: Նամակատարը վերադարձին կրկին հյուր է ընկնում նույն տունը: Ես նամակն էլ է փոխում չար հարսը ու գրում է, թե՛ նամակն ստանալուն պես իր ծնածը կրծքիցը կապեցեք ու դուրս արեք իս կնոջը: Ես նամակն ստանում են թագավորն ու թագուհին, շատ են զարմանում, շատ են ցավում, բայց ինչ անեն, կատարում են ինչ որ գրած էր. Երեխին մոր դոշիցն են կապում ու դուրս անում:

- Ես ո՞րտեղից եկավ ես շունը,- աղաղակում է տանտիկինը:

- Բավական էր,- գոռում են վրեն մարդն ու թագավորի տղեն:- Պատմի, քույրիկ, հետո՞ . . . հետո՞ . . .

Աղքատը շարունակում է .

- Հետո թագավորի տղեն տուն է գալի: Լսում է՝ ինչ է պատահել, ես է դառնում, զնում է իր կնոջն ու երեխյն ման գալու: Պատահում է կրնատ աղջկա եղբորը: Նա էլ դուրս էր եկել իր քրոջը ման գալու: Ընկերանում են ու ման են գալի: Շատ են ման գալի, շեն գտնում: Գալիս են, մեծ ճանապարհի վրա մի քարվանսարա են պահում . . .

- Սուտ է ասում,- զոշում է մեռնիկինք: Իսկ մարդն ու թագավորի տղեն ապուշ կտրած սպասում են վերջին: Եվ աղքատ կինը հասնում է վերջին .

- Սոված ու ծարավ թափառում է հալածված մերը իր ոսկեգանգուր երեխի հետ, վերջը աղքատ, տկլոր գալիս է, հասնում էդ քարվանսարայի դուռը . . . ախաղերն ու ամուսինը մեղքանում են, ներս կանչում, խնդրում են, որ մի հեքիաք ասի իրենց համար . . .

- Վա՞յ,- ուշաթափվում է տանտիկինք:

- Լուսիկ ջա՞ն . . . մի՞թե դու ես . . . վեր են թռչում թագավորի տղեն ու ընկերը, - Լուսիկ ջա՞ն . . .

- Հա՛, ձեր Լուսիկն եմ ես, ահա իմ ախաղերը, ահա իմ ամուսինը, ահա իմ ոսկեգանգուր երեխան և ահա շար հարսը . . .

Լեզվով չի պատմվիլ, թե ինչպես են ուրախանում ամենքը, որ իրար որոնում էին ու գտնում են վերջապես:

Իսկ շար հարսին կապում են կատաղի ձիու պոչից ու քաց են թողնում արձակ դաշտերում: Որտեղ արյունն է կաթում, էնտեղ փուշ ու տատասկ է դուրս գալի, որտեղ արտասուբն է թափվում, էնտեղ լիճ է գոյանում: Էն լճի խորքում երևում է մի երեխա՝ քնած օրորոցում, դանակը դրած զլխի տակին: Ասում են՝ երևում է և մի վանք, են վանքում շոքած է մի կին ու լալիս է, լալիս է, անվերջ լալիս է:

# About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](#)<sup>[1]</sup>. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](#)<sup>[2]</sup> license or, at your choice, those of the [GNU FDL](#)<sup>[3]</sup>.

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)<sup>[4]</sup>.

The following users contributed to this book:

- Վազգեն
- GeoO

- 
1. [↑ http://wikisource.org](http://wikisource.org)
  2. [↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0](http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0)
  3. [↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html](http://www.gnu.org/copyleft/fdl.html)
  4. [↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)